

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 21/4

8 հոկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց քաղաքացի Հռիփսիմե Գյուլգատյանի 24.09.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 16.09.2014 թ-ի թիվ 0268268 որոշման դեմ:

Քաղաքացի Հռիփսիմե Գյուլգատյանի գանգատում բերված փաստարկները.

Սույն թվականի սեպտեմբերի 16-ին, որպես կազմակերպության գլխավոր հաշվապահ Շենգավիթի ՀՏ կողմից ենթարկվել է 20.000 դրամի չափով վարչական տուգանքի ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով՝ եկամտային հարկի 2014 թ-ի հուլիս ամսվա հաշվետվությունը սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու համար (ներկայացվել է օգոստոսի 28-ին): Ընդ որում, հաշվետվությամբ ներկայացված հարկային պարտավորության գումարը վճարվել է բյուջե ժամանակին և լրիվ չափով:

Առողջական խնդիրների լուծման նպատակով Հռիփսիմե Գյուլգատյանը ծրագրել է օգոստոսի սկզբին մեկնել հանրապետությունից: Այս կապակցությամբ որոշել է հաշվետվությունները ներկայացնել շուտ, սակայն էլեկտրոնային ծառայությունների համակարգում չի հայտնաբերել եկամտային հարկի հաշվետվության ձևը: Թեժ գծից տեղեկացել է, որ հաշվետվությունը կտեղադրվի օգոստոսի 15-ին: Չկարողանալով այլևս հետաձգել մեկնումը և հույս ունենալով, որ հաշվետվության ներկայացման ժամկետը կհետաձգվի, Հռիփսիմե Գյուլգատյանը օգոստոսի 18-ին դուրս է եկել հանրապետությունից: Հետագայում տեղեկացել է, որ հաշվետվության ձևը էլեկտրոնային համակարգում տեղադրվել է օգոստոսի 19-ին՝ հարկատուներին հաշվետվությունը կազմելու և ուղարկելու համար օրենսդրությամբ սահմանված 20 օրյա փոխարեն հատկացնելով 1 օր ժամանակ:

Ելնելով վերոգրյալից՝ Հռիփսիմե Գյուլգատյանը խնդրում է պաշտպան իր իրավունքները և հաշվի առնելով վերը նշված օբյեկտիվ իրավիճակը կայացնել արդարացի որոշում՝ իրավախախտումն անհիմն համարելու մասին:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Հայք Ավիա» ՓԲԸ գլխավոր հաշվապահ Հռիփսիմե Գյուլգատյանի կողմից 2014 թ-ի հոիլիս ամսվա եկամտային հարկի հաշվարկը օրենքով սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամ:

Հարկ է նշել, որ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն հարկային գործակալները պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար այդ ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմնին ներկայացնել եկամտային հարկի հաշվարկ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ իրոք, ՀՀ ՖՆ էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ընդունման համակարգում առկա տեխնիկական խնդիրներով պայմանավորված, հնարավոր չի եղել հարկ վճարողների կողմից 2014 թ-ի հուլիս ամսվա եկամտային հարկի հաշվարկը, որը պետք է ներկայացվեր բացառապես էլեկտրոնային եղանակով, ներկայացնել մինչև օգոստոսի 19 ընկած ժամանակահատվածում՝ եկամտային հարկի հաշվարկի ձևը սահմանված չլինելու պատճառով:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ քննարկվող դեպքում եկամտային հարկի ներկայացման օրենքով սահմանված ժամկետի ընթացքում տեխնիկական խնդիրների առկայության պայմաններում Հոփսիմե Գյուլզատյանի կողմից էլեկտրոնային եղանակով հաշվարկի չներկայացումը չի կարող առաջացնել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով նախատեսված պատասխանատվություն, քանի որ զանցակազմի սուբյեկտիվ կողմը՝ մեղքը, բացակայում է:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Բեկանել ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 16.09.2014 թ-ի թիվ 0268268 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ